308 Հիսուսն հավաքեց գառներին կորած,

1. Հիսուսն հավաքեց գառներին կորած,
Նա կհավաքի հայերին ցրված,
Որ նրանց փրկի ու երկինք տանի,
Տերը հայերին մենակ չի թողնի:

Սիրելի՛ զավակ, հայ քրիստոնյա,
Աստված մեր ազգին պիտի ողորմի:

2. Բազում տանջանքից մենք վեր կհառնենք,
Ողջ Հայաստանով Քրիստոս դավանենք,
Աստծո ուժը վեր է ամենից,
Մենք դեռ ընկած չենք Աստծո երեսից:

3. Հավատք ունենանք, Քրիստոս դավանենք,
Անձայն կուռքերը մեզանից վանենք,
Կենդանի Աստված մեզ հետ է, հայե՛ր,
Աստված մեր հանդեպ ունի անհուն սեր:

4. Մենք փորձության մեջ հավատքներս պահենք,
Մեր պապերի պես Տիրոջ ծառայենք,
Քանի անգամ էլ որ հայը ընկնի,
Հիսուսը պիտի նրան վեր հանի: